
ՀԱԿԱՐԻԻ ՎԵՐՆԱՀՈՎԻՏ
ՄԱՍՇՏԱԲ 1 : 225000
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ՎԱԿՈՒՆԻՍ Պատմական գիւղեր եւ գիւղատեղիներ
Հայթաղ Այլ բնակավայրեր
Եկեղեցիներ կամ վանքեր
Տապանաքարեր եւ խաչքարեր
Հին կամուրջներ
ՄԱՀՄԱՆՆԵՐ
Սիւնիքի եւ Արցախի սահմանը
Սիւնիքի եւ Արցախի գաւառների սահմանները
Հայթաղ
Աղբրաձորի վանք
ՇԱԼՈՒԱՑ
Աղաքելոց
Ալեակչի
Չորմանք
Չորախաչ
Մովսեսաշէն
Մունջուխլու
Ղախիշի վանք
ՎԱԿՈՒՆԻՍ
Արջաձոր
ՎԱՂԱՋԻՆ
ԱՐՏԱՇԱՒԻ
ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ
Կապոսի վանք
ԵՋՆԱԳԱՄԵՐ
ԱՐՈՒԱԿԱՆ
Ղազարապատ
ՀԱԿ
ՄՇԵՆԻ
ՎԱՐԱՋԳՈՄ
ՍՈՆԱՍԱՐ
ՄԻՐԻԿ
ԱՂԲԱԹԽԵՐՏ
ՀԷՐԻԿ
Գանձայ
Եաղին
Մկնատուկի խաչի վանք
ՀՈՉԱՆՑ
Եղցահող
ՀԱՑԵԼԵԱԿ
ՍԹՈՒՆԻՍ
Զիրիկ
ՄԵԾՇԷՆ
Մելիքաշէն (ԱՐՔՈՒԳԵՏ)
Բերդոր
ՀԻՆՇԷՆ
ԱՐԱՀՈՒԾ
Մանքիզ
ԽՈՋՆԱՎԱՐ
Ճամբարխաչ
ՎԱՂԱՏՈՒՐ
ԽՆԱՑԱԽ
ՇԱԲԱԿԻ
ԱՐԱՒԻՍ
ՏԵՂ
Խրոով
ԿՈՌՆԻՁՈՐ
ԽՆՁՈՐԵՍԿ
Վանոցայ
ՀԱՐԱՐ
ԲԱՁՄԱԾԱԿԱՐ
Դաշտադապտ
ԳՈՐՈՒ
ՀԱԿԱՐԻ
ՔՐՕՆՔ
ԱՄՈՒՏԵՂ
ՔԱՇՈՒՆԻՔ
Ղարաբաղ
Գորիսի
Հոչանց
Ղարաբուլաղ
Ղարաբաղ
Ղարաբաղ
Ղարաբ

ինչպէս երեւում է ուրարտական (Վանի թագաւորութեան) արձանագրութիւններից, մ. թ. ա. 9-րդ դարի վերջից Հայկական լեռնաշխարհի հիւսիսում յիշատակուող Զաբախա կամ Զաբախեան երկրի անուան տառադարձուած տարբերակն է՝ Զաբախա-Զաբախա-Զաւախա-Զաւախք[6]: Արգիշտի Ա-ի (մ. թ. ա. 786-764 թթ.) թողած Խորխոռեան արձանագրութեան մէջ՝ 785-784 թթ. գրաւուած Դիաուխի կամ Դայա (Տայք), Տարիունի (Դարոյնք՝ Բասէն) եւ այլ երկրների թւում նշւում է Զաբախան: Վերջինս յիշատակւում է նաեւ ուրարտական յաջորդ մի քանի թագաւորների թողած արձանագրութիւններում: Թէեւ Զաւախքի մասին մ. թ. ա. 8-րդ դարից աւելի վաղ յիշատակութիւններ չկան, սակայն, ուսումնասիրելով մինչուրարտական շրջանը, կարելի է ենթադրել, որ այն կամ վարչականօրէն մաս է կազմել մ. թ. ա. 2-րդ հազարամեակում գոյութիւն ունեցած հայկական առաջին պետական կազմաւորումներից մէկի, ամենայն հաւանականութեամբ Հայասային եւ Էթիունիին, կամ էլ եղել է բաւական ընդարձակ ինքնուրոյն կազմաւորում՝ ընդգրկելով հետագայի Գուգարք աշխարհի ամբողջ արեւմտեան հատուածը: Աւելի հաւանական է երկրորդ տեսակէտը. պատահական չէ, որ Արգիշտիի վերոյիշեալ արձանագրութիւնում Զաբախան յիշատակւում է իբրեւ գրաւուած երկիր: Նշանակում է, մինչեւ մ. թ. ա. 8-րդ դարի սկիզբը Զաւախքը եղել է ինքնիշխան ցեղապետութիւն եւ այդ ժամանակ, որպէս հայ էթնոսով բնակեցուած տարածք, միաւորուել է Վանի միասնական թագաւորութեան մէջ՝ կազմելով նրա հիւսիս-արեւմտեան ամենաընդարձակ ու սահմանամերձ նահանգը[7]:

Յետուրարտական՝ Երուանդունեաց Հայաստանի ժամանակաշրջանից (մ. թ. ա. 6-2-րդ դդ.) Զաւախքի մասին ուղղակի տեղեկութիւններ գրեթէ չկան: Միայն կարելի է վկայակոչել առասպելախառն, բայց ուշագրաւ երկու յիշատակութիւն՝ Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնից» եւ «Քարթլիս Ցխովրեբայից»: Պատմահայրը նշում է, որ Վաղարշակ Ա-ն «զկէս մասինն Զաւախաց» ժառանգութիւն է տալիս Շարայի ցեղից Գուշարին եւ նրան նահանգի վրայ կարգում բդեշխ՝ Հայոց երկիրը հիւսիս-կովկասեան լեռնականներից պաշտպանելու համար[8]: Հաւաքական ու կիսառասպելական կերպար Վաղարշակի այս ձեռնարկումը ուսումնասիրողներից շատերը վերագրում են մ. թ. ա. 3-րդ դարին: Ստացւում է, որ այդ ժամանակ Զաւախքը եղել է Երուանդունիների պետութեան կազմում եւ տրուել է Գուշարին, որի անուան հետ է կապւում Գուգարք տեղանունը, այսինքն՝ երկրամասը դաղարել է ընդարձակ նահանգ լինելուց եւ մտել է նորաստեղծ Գուգարք սահմանակալ բդեշխութեան մէջ, ընդ որում՝ իր հերթին տրոհուելով երկու մասի՝ Զաւախք Վերին եւ Զաւախք Ներքին: Վերին Զաւախքը նոյնանում է Խորենացու նշած «կէս մասինն Զաւախաց» տարածքի հետ, քանի որ տրուել է հարեւան Շարայի՝ Շիրակի գաւառին: Ներքին Զաւախքը աղբիւրներում չի յիշատակւում: Սակայն եթէ կար Վերինը, որը գաւառի բարձրադիր հարաւային եւ հիւսիս-արեւելեան մասն էր, նրա համեմատութեամբ ցածրադիր արեւմտեան եւ հիւսիս-արեւմտեան հատուածը, բնականաբար, պէտք է կազմէր Ներքին Զաւախքը[9]:

Յատկանշական է, որ Խորենացու վերոյիշեալ վկայութիւնը մ. թ. ա. 3-րդ դարում Զաւախքի մասին ձեւափոխուած

«վրացական» տարբերակով բերւում է «Քարթլիս Ցխովրեբայում», որի համաձայն, ինչպէս վերը յիշատակուեց, այն բաժին է ընկել այս անգամ Զաւախոսին: Բանն այն է, որ մ. թ. ա. 270-ական թթ. Մեծ Հայքի հիւսիսային հարեւանութեամբ կազմաւորուել է Վրաց Փառնաւազեան պետութիւնը (Իբերիա, Վիրք), որն, օգտուելով հայ Երուանդունիների հակառակորդ Սելեւկեանների օժանդակութիւնից, հայոց երկրից գրաւել եւ անջատել է Գուգարքն ու Զաւախքը, ինչպէս եւ յարակից այլ շրջաններ: Այդ ժամանակ Զաւախքի կենտրոնը Ծունդա[10] ամրոցն էր, որ հայերը կոչում էին Քաջաստուն կամ Քաջաց քաղաք: Վերը թուարկուած տարածքները վրացիներից հետ վերցնելու մասին վկայում է յոյն հեղինակ Ստրաբոնը: Նա գրում է, որ մ. թ. ա. 2-րդ դարում հայոց Արտաշէս թագաւորը (189-160), ի թիւս այլ հողերի, իբերներից գրաւել (այն է՝ վերադարձրել է - Ա. Մ.) եւ իր երկրին է միացրել Գոգարենէն՝ Գուգարքը[11]: Նոյն վկայութիւնը մէկ այլ խմբագրութեամբ հանդիպում է նաեւ վրացական աղբիւրներում: Ըստ Լէոնտի Մրովելու, քարթուելները՝ վրացիները, Զաւախէթը գրաւելու համար Արտաշեսի դէմ պայքարում դուրս են բերել օսերին[12], հայկական աղբիւրներում յիշատակուող ալաններին: Կը նշանակի, հայ-ալանական պատերազմը, որի մասին պատմում է Մ. Խորենացին «Արտաշէս եւ Սաթենիկ» յայտնի առասպելում, ընթացել է նաեւ Զաւախքի համար: Արտաշէսը կարողանում է ոչ միայն ետ վերադարձնել հայկական հողերը, այլեւ իրեն ենթարկել Վրաց փոքրիկ թագաւորութիւնը: Փաստօրէն այդ ժամանակ Գուգարքի բդեշխին է անցնում վրաց գահը: Զարմանալի չէ, որ հետագայի որոշ հեղինակների մօտ հանդիպում ենք «բդեխշ գուգարացոց եւ վրաց» արտայայտութեանը:

Արտաշէսեանների եւ Արշակունիների ժամանակաշրջանում եւս Զաւախքի վերաբերեալ յիշատակութիւններն աղքատիկ են, եւ գաւառի մասին պատկերացում կարելի է կազմել հիմնականում ամբողջ նահանգի՝ Գուգարքի միջոցով: Վերջինս մինչեւ Արշակունիների անկումը՝ 428 թ., շարունակել է մնալ իբրեւ Մեծ Հայքի հիւսիսային պաշտպանական նահանգը եւ անրանից չի անջատուել նոյնիսկ մ. թ. առաջին դարի առաջին կէսին (1-52 թթ.), երբ հայոց գահին, ի թիւս այլ օտարների, բարձրացել էին նաեւ վրացիներ:

Խնդրոյ առարկայ գաւառին վերաբերող ժլատ յիշատակումներից, թերեւս խիստ արժէքաւորը, որը նրա ժողովրդագրական վիճակի գողտրիկ վկայութիւն է, պատկանում է վրաց տարեգրի գրչին: Ըստ աւանդութեան, Հռիփսիմեան քրիստոնեայ քարոզիչ քոյրերից Նինոն՝ հայկական աղբիւրների Նունէն, Հայաստանից փորձում է անցնել Վրաստան եւ լինում է Զաւախքում, որտեղ Փարուանայ լճի ափին հանդիպում է մցխէթցի հովիւների եւ, նրանց հետ խօսելով հայերէն, կարողանում է պարզել Մցխէթ տանող ճանապարհը[13]: Այս վկայութիւնը որոշակի պարզութիւն է մտցնում երկու կարեւոր հարցերում: Նախ, որ Նունէն մինչեւ Վիրք անցնելը եղել է Հայաստանում, ծանօթացել է հայերէնին եւ, ի թիւս այլ քարոզիչների, այնտեղից քրիստոնէութիւնը տարածել վրաց աշխարհում[14]: Երկրորդ՝ Զաւախքի գործածական լեզուն հայերէնն էր, այն հայաբնակ էր, այլապէս Մցխէթից եկած հովիւների համար անհրաժեշտութիւն չէր լինի սովորելու հայոց լեզուն:

Արշակ Բ-ի օրօք (350-368) Գուգարաց

© National Library of Armenia

նահանգն ապստամբում է եւ յարում վրաց թագաւորին: Պապ թագաւորի հրամանով Մուշեղ սպարապետը ետ է դրաւում Գուգարքը, պատժում բդեշխին ու նրան օժանդակած իշխաններին եւ վերականգնում հայ-վրացական սահմանը՝ Կուր գետը. «...զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց եւ ընդ յերկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր»[15]:

Ուշագրաւ է, որ գտնուելով Գուգարքի կազմում, Ջաւախքը 3-4-րդ դդ. պահպանում էր իր ներքին ինքնուրոյնութիւնը: Այստեղ իշխում էին Վարձաւունի[16] նախարարական տան ներկայացուցիչները: Արշակունեաց Հայաստանի կեանքում վերջիններս ունեցել են իրենց ուրոյն տեղը: «Գահնամակում» Վարձաւունիները 70 նախարարների թւում յիշատակւում են 23-րդը: Պատերազմի ժամանակ Հայաստանի չորս զօրավարութիւններից Արեւելեան ուղղութեան զօրքերի մէջ նրանք ունեցել են 200 զինուոր[17]:

387 թ. Հայաստանի բաժանումից յետոյ Արշակունիների ազդեցութիւնը Գուգարքի եւ Ջաւախքի վրայ զգալիօրէն թուլացաւ, իսկ 428 թ. հայոց թագաւորութեան կործանումից յետոյ նրանք միացուեցին Սասանեան Իրանի տիրապետութեան տակ կազմաւորուած Վրաց մարզպանութեանը, ճիշտ այնպէս, ինչպէս նոյն ժամանակ Արցախը կցուեց պարսկահպատակ մէկ այլ մարզի՝ Աղուանքին:

Ինչպէս ամբողջ Հիւսիսային Հայաստանը, Ջաւախքը եւս պարսկական լծի տակ մնաց մինչեւ 7-րդ դարը՝ արաբական արշաւանքները: 7-րդ դարի հեղինակ Յովհան Մամիկոնեանի «Պատմութիւն Տարօնի» երկում, արաբական արշաւանքների առիթով, նորից հանդիպում ենք Ջաւախքի մասին յիշատակութեան: Պատմիչը վկայում է, որ արաբ զօրավար Աբդռահիբը 7-րդ դ. կէսերին ասպատակել է Հայաստանի գաւառները՝ Հարքը, Բասէնը, Ջաւախքը, Վանանդը, անցել Վիրք եւ աւարով վերադարձել Արաբիա[18]: Այստեղ յատկանշականն այն է, որ Ջաւախքը թուարկւում է հայոց գաւառների շարքում, իսկ յետոյ նոր միայն նշւում է Վիրքը: Նշանակում է, 7-րդ դ. 40-50-ական թթ.՝ արաբական առաջին արշաւանքների շրջանում, այս գաւառն արդէն ոչ թէ Վիրքի, այլ Հայաստանի կազմում էր:

Ջաւախքը արաբական տիրապետութեան տակ մնում է մինչեւ 9-րդ դ. վերջը, երբ Բագրատունեաց Սմբատ Ա-ն (890-914), Յովհաննէս Դրասխանակերտցի պատմիչի վկայութեամբ, «երթեալ չուէ զկողմամբք Գուգարաց՝ եւ զայնս եւս ամրոցս իւրոյ տէրութեանն առհասարակ յինքն գրաւէր նուաճէր»[19]:

10-րդ դ. 70-80-ական թթ. Գուգարքի մեծ մասը մտնում էր Լօռուայ կամ Կիւրիկեան (նաեւ Գուգարքի, որագետի) թագաւորութեան տարածքի մէջ: Վերին Ջաւախքը, յատկապէս նրա հարաւային մասը՝ Գոգշէնը[20], որոշ ժամանակ դեռ մնում է Բագրատունիների ազդեցութեան տակ, իսկ Ներքին Ջաւախքը 10-րդ դ. վերջին գրաւում են հետզհետէ հզօրացող վրաց Բագրատունիները: 11-րդ դ. սկզբին նոյն ճակատագրին է արժանանում նաեւ բուն Վերին Ջաւախքը: Շուտով վրաց թագաւորները Ջաւախքն ու նրան հարեւան Սամցխէն[21] վերածում են իրենց թագաւորութեան հարաւում ընկած ուժեղ պաշտպանական գաւառների՝ կենտրոնախոյս ուժերի, Բիւզանդական կայսրութեան, մի փոքր աւելի ուշ՝ սելջուկ-թուրքերի դէմ: Բագրատ Գ-ն 11-րդ դ. սկզբին

կառուցապատում ու ամրացնում է գաւառի բնակավայրերից մէկը եւ կոչում Նոր Քաղաք, վրացերէն՝ Ախալքալաք (ախալի՝ նոր, քալաքի՝ քաղաք): Բագրատ Դ-ն 1044-1047 թթ. Լիպարիտ Օրբելեանի դէմ պատերազմի ժամանակ թափարվան գետի եւ նրա ձախակողմեան Քառասունաղբիւր վտակի գոյացրած թերակղզու մասում կառուցում է Ախալքալաքի բերդը: Վրաստանից այստեղ են բերւում որոշ թուով վրացի վերաբնակիչներ:

Վրաց տիրապետութիւնը երկար չի տեւում: 1064 թ. Հայաստանն ու Վրաստանը ենթարկւում են սելջուկեան ասպատակութիւններին: Այդ թուականին սուլթան Ալփ-Արսլանը «...եւ իջեալ բանակեցաւ ի գաւառն, որ կոչի Ջաւալիս (Ջաւախս - Ա. Մ.),- գրում է պատմիչ Մատթէոս Ուռհայեցին,- եւ պատերազմաւ մեծաւ պատեաց զքաղաքն, որ կոչի Ալախ (Ախալ-քաղաք - Ա. Մ.) եւ ուժգին զօրութեամբն առաւ Ալախ քաղաքն. եւ առ հասարակ զամենայն քաղաքն սրով կոտորեաց՝ զայր եւ զկին՝ անողորմ եւ զամենայն քահանայսն եւ զկրօնաւորսն եւ զիշխանսն սրախողխող արարեալ. եւ ելցաւ ամենայն քաղաքն արեամբ. եւ անհամար մանկունս եւ աղջկունս տարան ի Պարսիկս ի գերութիւն, եւ գանձս ոսկւոյ եւ արծաթոյ՝ ականց եւ մարգարտացն որ եւ արծաթոյ՝ ականց եւ մարգարտացն որ ոչ էր թիւ»[22]: Նոյն իրադարձութեան մասին յիշատակում է նաեւ Վարդան պատմիչը. Տուղրիլի հօրեղբօր որդին՝ Ալփ-Արսլանը «...եկն դարձեալ հարիւր հազարաւ, եւ առ զնոր քաղաք, զոր Վիրք Ախալ-քաղաք ասեն»[23]: Պատմիչների այս վկայութիւններից երեւում է, որ 11-րդ դարի կէսերին իբրեւ վարչական կենտրոն Ծունդային փոխարինած Ախալքալաքը սարսափելի կոտորածների ու բռնագաղթի հետեւանքով կորցել էր իր բնակչութեան զգալի մասը:

12-րդ դարի սկզբին վրաց Դաւիթ Շինարարին (1089-1125) յաջողւում է սելջուկ-թուրքերից ետ գրաւել Լօռին ու Ջաւախքը: Սակայն ամբողջ 11-րդ դարի ընթացքում այն, ի թիւս այլ գաւառների, ձեռքից ձեռք է անցնում: 1175 թ. օգոստոսին Գանձակի սուլթան-աթաբեկ Ելդկուզի զօրքերը ասպատակում են Ջաւախքն ու Թռեղքը: Գէորգի Գ-ն (1156-1184) խուսափում է ճակատամարտից եւ չի կանխում սելջուկների գործողութիւնները[24]: Անին ու Շիրակը աւերելուց յետոյ Ելդկուզը «...ընդ նմին աւերէ զԱխալ քաղաք եւ զՋաւախեթ եւ առժամայն դառնալով ի Դուին, սատակի ինքն եւ սուլտանն եւ այլ բազումք ի մեծամեծաց»[25]: Միայն 12-րդ դարի վերջին, թամար թագուհու (1184-1213) պատմիչի վկայութեամբ, սելջուկների նկատմամբ Զաքարէ եւ Իւանէ Զաքարեանների տարած յաղթանակներից յետոյ Վրաստանին է ենթարկւում Ջաւախքից մինչեւ Սպեր ընկած տարածքը[26]:

Այս շրջանում շարունակուեցին քարթուելական (վրացական) էթնիկական նոր խմբերի ներթափանցումները Ջաւախք, որոնք վրաց Բագրատունիների ուժեղացման ժամանակաշրջանում (12-րդ դ.-13-րդ դ. սկիզբ) յատկանշական էին ոչ միայն Ախալքալաքի, այլեւ հայ-վրացական զինակցութեան շնորհիւ Վրաստանին անցած Հիւսիսային Հայաստանի միւս գաւառներին: Այսուհանդերձ, այդ գաւառներից Լօռին, Սամցխէ-Ախալցխան, Տաւուշը, Սեւանի շրջակայ գաւառները, ինչպէս եւ Ջաւախքը շարունակում էին գերազանցապէս մնալ հայաբնակ: Պատահական չէ, որ այդ տարածքները վրաց արքունիքը յանձնեց հայ Զաքարեաններին, որոնք Վրաստանի հովանաւորու-

© National Library of Armenia

թեան ներքոյ ստեղծեցին իրենց իշխանապետութիւնը:

Թամար թագուհու պատմիչը գրում է, որ Ջաւախքում կուսակալներ էին Սարգիս Երկայնաբազուկ Թմոգվելին (Թմոգվեցին) եւ Շալա Թորելին (Թորեցի): Առաջինը նստում էր Թմոգվի, հայկական՝ Թմուկ կամ Թմկա բերդում, որը գտնւում էր Կուրի ձորում, Ծունդա աւանից ոչ հեռու, իսկ երկրորդը՝ հաւանաբար Թորէա գիւղում: Այն, որ Ջաւախքում եղել են երկու կուսակալներ՝ գաւառապետեր, պատահական չէ: Նշանակում է շարունակում էր պահպանուել գաւառի նախկին վարչական բաժանումը: Թորեցիները նոյնպէս ենթարկւում էին Թմկաբերդի Ջաքարեաններին: Ախալքալաքը, որն օգտւում էր քաղաքային ինքնավարութիւնից, ամբողջ գաւառի վարչական ու տնտեսական կարեւորագոյն կենտրոնն էր:

13-րդ դ. 20-ական թուականների կէսերին Ջաւախքը ենթարկուեց միջինասիական տիրակալ Ջալալէդդինի, իսկ 30-ականներին՝ մոնղոլների ասպատակութիւններին[27]: Սակայն մի քանի գաւառներում, այդ թւում Ջաւախքում, Ջաքարեանների ինքնավար վիճակը պահպանուեց: Ըստ 1245 թ. նոր վարչական բաժանման՝ մոնղոլների հսկողութեամբ Ջաւախքը թողնուեց Թորեցիներին: 1266 թ. Թմկաբերդի տէր Սարգիս Ջաղեցին, օգտուելով վրաց թագաւորների եւ մոնղոլների հակամարտութիւնից, կարողացաւ հիմնադրել մի ընդարձակ իշխանութիւն՝ Տաշիրից մինչեւ Էրզրում, Սամցխէի աթաբեկութիւն անունով, որն իր մէջ ընդգրկեց նաեւ Ջաւախքը: Մինչեւ 14-րդ դ. սկիզբը, մոնղոլներին որոշ քանակութեամբ հարկեր վճարելով, Հայաստանի հիւսիսում եւ հիւսիս-արեւմուտքում կազմաւորուած, հիմնականում հայաբնակ այս իշխանութիւնն իր ինքնուրոյնութիւնը պահպանեց մինչեւ 1535 թ.՝ պայքար մղելով Քարթլիի, Լէնկ-Թեմուրի, նրա յաջորդների՝ Թեմուրեանների, 15-րդ դարից՝ թուրքմէնական կոյունլու ցեղերի դէմ: Ինչպէս Բագրատունիների, Ջաքարեանների, այնպէս էլ վերջիններիս յաջորդներ Ջաղեցիների օրօք, հայ մշակութային կեանքը Ջաւախքում զգալի վերելք ապրեց, որի պերճախօս վկայութիւններն են պահպանուած բազմաթիւ հայկական ճարտարապետական կոթողները[28]:

15-րդ դարի վերջից Ջաւախքը յայտնուեց զանազան նուաճողների տեսադաշտում: 1484 թ. պարսից Եաղուբ խանի զօրքերը աւերեցին այն, կոտորեցին ու գերեվարեցին բնակչութեանը, իսկ գաւառը կրակի մատնեցին[29]: 1535 թ. Իմերեթիայի ու Քարթլիի թագաւորները համատեղ ջանքերով պարտութեան մատնեցին Սամցխէի աթաբեկի զօրքերին եւ տիրեցին Ախալքալաքին ու Ախալցխային: Սակայն Սեֆեան Իրանի դէմ պատերազմների ընթացքում 1547 թ. օսմանեան թուրքերը գրաւեցին այդ քաղաքները: 1555 թ. Ամասիայում կնքուած պարսկա-թուրքական հաշտութեամբ Ջաւախքն անցնում էր Պարսկաստանին: Սակայն 1578 թ. պատերազմը վերսկսւում է, թուրքերը նորից ներխուժում են Ջաւախք եւ շուտով այն մտցնում նորաստեղծ Զլդբրի, հետագայում՝ Ախալցխայի նահանգի (էյալեթ, վիլայեթ) մէջ՝ 1637 թ. այն վերածելով ինքնուրոյն գաւառի՝ սանջակի:

Նուաճուած տարածքներում օսմանցիներն անցկացնում են աշխարհագիր՝ տեղի բնակչութեանը հարկման ենթարկելու նպատակով: 16-րդ դ. վերջին կազմուած թուրքական հարկացուցակներից մէկն

արժէքաւոր տեղեկութիւններ է պարունակում Ախալքալաքի գաւառի ժողովրդագրական իրավիճակի մասին: «Գիւրջիստանի վիլայեթի ընդարձակ դաւթար» կոչուող այդ փաստաթղթում թուարկւում են գաւառները՝ իրենց գիւղերով եւ նրանցում ապրող մարդկանց անուանացանկերով: Պարզւում է, որ Ախալքալաքի բնակավայրերի մեծ մասում բնակիչները քրիստոնեաներ էին եւ կրում էին հայկական ու վրացական կամ հայերի եւ վրացիների մէջ մեծ տարածում գտած անուններ: Հայկական կամ հայերի կողմից լայնօրէն գործածուող անուններ հանդիպում ենք հետեւեալ գիւղերում.

Կոկիա - Ռուբէն, Ռոսեբ (Ցովսէփ)

Օրջա - Հաճես Իշխանի, նրա եղբայր Սարգիս, Աւագ Հաճէսի, Կիրակոս, Սիմոն, Ղազար, Նազարի որդի

Կոթելիա - Ջաքար

Բարալեթ - Միտիչի (Մկրտչի) թոռ, նրա որդի Սարգիս

Տուրցխ - Մասուրի (Մանսուր) որդի Սարգիս, Աւագ

Խանդո - Ցակոբ

Վաչիան - Քերոբ

Քարծեփ - Բայանդուր

Հոկամ - Մանուէլ Սարգսի

Քիլդա - Խաչատուր

Վերին եւ Ներքին Խոսպիաներ - Միտիչ (Մկրտիչ) Տէր-Բեկի, Խոսիկ-Ցուսիկ, Սահակ

Ջիգրաշէն - Ջաքարի թոռ

Մեծ Մաջադիա - Ցակոբ

Նաբալաքեւ - Հաւաթեղ Կարապետի

Կորխ - Ռոստոմ, նրա որդի Կիրակոս, Ծահաբա Մկրտիչի, Հաճէս Սարգսի, Կիրակոս Ասուա/ծա/տուրի

Գումբուրդո - Խարաբայի որդի Դաւիթ, Մկրտիչ՝ Ամիրխանի որդի, Եարալ Կիրակոսի, Ծահկուլի որդի Աբրահամ, Մանուկ

Օլաւերդ - Աբաս

Խուլգումո - Ասուա/ծա/տուր, Արտաշէս

Հեշտիա - Տէր-Ցակոբ

Մեծ Խորենիա եւ Ջամդուրա - Գրիգոր, նրա եղբայր Մոսէ, Սահակ Գրիգորի, նրա եղբայր Սարգիս, Տէր-Ցակոբ, նրա եղբայր Եարալ, Խաչատուր, Մուրադ Ջիհանշէի

Օրջա - Վահրամ, Սարգիս, Եղիազար

Զրեսկ - Շահմուրադ, Ռոսէփ (Ցովսէփ), Սիմոն, Սամսոն, Ասուա/ծա/տուր

Ղաւրմա Սարգիս

Բաւրա Բայանդուր

Թորիա - Առաքել, Բայանդուր, Ջանիբեկ Սարգսի, Մկրտիչ

Աբուլ - Եղիազար, Դաւիթ, Սարգիս

Ախալքալաքի բերդ - Մուրադ, նրա եղբայր Ջադիկ

Փոքր Մուրջախեթ - Հաճէս Սարգսի

Փոքր Մազմարա - Դոլիկ Ասուա/ծա/տուրի

Ծունդա - Ջոջիկ Ջհանշէի, նրա եղբայր Մանուկ

Սուլդա - Ծերմազան, նրա որդի Սիմոն

Էրինջա - որդի Եղիազարի, նրա եղբայր Մանաս, Ցակոբ

Խոզաբուն (Խզափին) - Մանուկ Ասուա/ծա/տուրի

Արագովա - Սարգիս

Ափնիա - Աբաս

Բեժանո - Սիմոն

Ալաստան - Արզուման

Լոմատուրցխ - Ալիբեկի որդի Ռոստոմ

Ջակ - Եղիազար, Ռոսէփ-Ցոսէփ

Բուռնաշեթ - Սարգիս եւ այլն:

Ուշադրաւ է, որ կան նաեւ բնակավայրեր, որոնց բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը հայեր են: Այսպէս. նշանաւոր Թմուկ (Թմոգվի) բերդաքաղաքն ըստ նոյն աղբիւրի գերազանցապէս հայաբնակ էր: Այնտեղ հանդիպում ենք հետեւեալ անունների. Սարգիս Առաքելի, Ռոստոմ, Անանիայի որդի, նրա եղբայր Մկրտիչ, որդի Վարդանի, որդի Եղիգարի, Ցովհաննէս Բայանդուրի, Պապու Շիրինի, Բերիկ Փիրազիզի, նրա որդի Մկրտիչ, Մուրադ, Տէր-Ցակոբ, Բերիկ Մուրադի, նրա եղբայր Մարգար, Ցակոբ, Սարգիս Մելիքի եւ այլն: Զուտ հայաբնակ էր

© National Library of Armenia

Զլդրի գաւառի Քենարբեկ գիւղը՝ Ծառուկի որդի, նրա եղբայր Ասուա/ծա/տուր, Մարգարի որդի, Ղուլիջանի որդի Նորսէս (Ներսէս), Խոսիկ-Ցուսիկ, Ռոստոմի որդի, Սարգիս Մուխթարի, Միկիրտիչ Վելիջանի, Միտիչի որդի, նրա եղբայր Սարգիս, Մուրադ Կարապետի, Մարտիրոս Աւանէսի, Յովհաննէս Ամիրազիզի, նրա եղբայր Կարապետ, Խաչիկ Համբարձումի, Թոռնիկ Ծառուկի, Խաչատուր Ալեքսանի, Մարգար, Պապու Մարգարի եւ այլք:

Հայաշատ էին նաեւ նոյն գաւառի Մեծ եւ Փոքր Կարծախ գիւղերը՝ Նադար Շահնազարի, Վարդան,[21] Գրիգոր Սուքիասի, Ջհանշէ Կիրակոսի, Մկրտիչի որդի, նրա եղբայր Վարձել, Բայանդուր, Խաչիկ Եարալի, որդի Սահակի, որդի Անտոնի, Տէր-Յակոբ Ջոմերդի, նրա որդի Շահազիզ, Եարազիզ Տէր-Յակոբի, Սարգիս, Ասուա/ծա/տուր, Դիարբեկ Սահակի, նրա եղբայր Ասուա/ծա/տուր եւ այլն[30]: Յատկանշական է, որ վերոյիշեալ անունների մէջ բազմիցս յիշատակւում է Տէր-Յակոբ անունը, իսկ Խոսպիայում՝ Տէր-Բէկը, հանգամանք, որը վկայում է տուեալ բնակավայրում հայ քահանայի, այն է՝ նաեւ հայկական ծխի ու եկեղեցու առկայութեան մասին:

Հետագայ դարերում օսմանեան երկարատեւ ու դաժան տիրապետութեան ընթացքում խնդրոյ առարկայ գաւառը եւս զերծ չմնաց բնակչութեան բռնի մահմեդականացումից: Իսլամ ընդունեց հայութեան յատկապէս այն հատուածը, որը վրաց գերիշխանութեան շրջանում դարձել էր քաղկեդոնական[31]: Իսլամացած այդ տարրերը արդէն 17-18-րդ դդ. եկուոր թուրքերի հետ Ախալցխայում, Ադիգէնում, աւելի քիչ՝ Ախալքալաքում յայտնի էին ընդհանուր «մեսխեթցի»[32] աշխարհագրական անունով: Այսպէս, ըստ վրաց հեղինակ Վախուշտ Բագրատիոնի, 18-րդ դ. 40-ական թթ. Ախալքալաքի գաւառի Բարալեթ եւ Կոկիա յայտնի բնակավայրերի հիմնական բնակիչները մեսխերն ու հայերն էին[33]: Թէեւ քրիստոնեաների համեմատութեամբ մահմեդականները սակաւաթիւ էին, սակայն օտար տիրապետութեան աւերիչ իրադարձութիւնները հող էին նախապատրաստում գաւառի էթնիկական դիմախեղման համար: Յատկապէս ծանր հետեւանքներ ունեցաւ 1730-ական թթ. կէսերին Նադիր խանի (հետագայում՝ շահ) արշաւանքը: Հիւսիսային Հայաստանից գերուած 6000 հայ բնակիչների նա բռնագաղթեցրեց Պարսկաստան: «...Եւ գերեցին զՆարիմանու նահանգն, զՋաւախէթու, զՁլտրու եւ զՂայի Ղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ,- գրում է Աբրահամ Կրետացին,- Եւ քշեցին զայր ու զկին, զծեր եւ զտղայ եւ տարան ի Խորասան՝ թուով ՁՌ (6000), որպէս եւ լսեմք»[34]: Այդուհանդերձ, ինչպէս երեւում է Հ. Ղուկաս Ինճիճեանի մի վկայութիւնից, 18-րդ դարի վերջին Ախալքալաքի գաւառը շարունակում էր մնալ գերազանցապէս հայաբնակ երկրամաս: Միայն Ախալքալաք քաղաքում ապրում էին 600 ծուխ հայեր եւ վրացիներ[35]: Այսպիսի քաղաքական ու վարչաժողովրդագրական իրավիճակ էր Ջաւախքում, երբ Անդրկովկասի համար ակտիւ ռազմաքաղաքական գործունէութիւն ծաւալեց Ռուսական կայսրութիւնը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Երեմեան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 46:

2 Նոյն տեղում, էջ 110:

3 Տաշիրը հիմնականում համապատասխանում էր Խորհրդային Հայաստանի Ստեփանաւանի եւ Կալինինոյի (այժմ Տաշիր) շրջաններին, Թումանեանի շրջանի հարաւային մասին, Կողբոփորը՝ Նոյեմբերեանի, Ջորոփորը՝ Թումանեանի մեծ մասին, Վերին Ջաւախքը՝ Վրաստանի Հանրապետութեան Ախալքալաքի եւ Բոգդանովկայի /Նինոծմինդա/, Թոռեղքը՝ Ծալկայի, Մանգլեացփորը՝ Մանգլիսի, Ծոբոփորը՝ Մառնէուլի, Բողնոփորը՝ Բոլնիսի շրջաններին: Հարաւի Կղարջք, Արտահան, Ծաւշեթ եւ այլ գաւառներ այժմ Թուրքիայի տարածքում են:

4 Ջաւախքի միջին բարձրութիւնը ծովի մակերեւոյթից 1800մ է: Ամենաբարձր գագաթն Աբուլն է՝ 3301մ: Կլիման խստաշունչ է՝ ձմեռը ցուրտ եւ երկարատեւ, ամառը՝ կարճատեւ ու զով (տարեկան միջին ջերմաստիճանը՝ 4-4,5 աստիճան): Գաւառը հարուստ է լճերով՝ Փարուանայ, Տաբաձորի, Սաղամո, Խոզափին, Խանչալի, Մադաթապի եւ այլն: Լեռնադաշտը ծածկուած է սեւահողփա եւ այլն: Լեռնադաշտը մասից, Ջաւախքն անդերով: Բացի հիւսիսային մասից, Ջաւախքն անտառազուրկ է: Փարուանայից սկիզբ է առնում Կուրի աջակողմեան Թափարվան վտակը:

5 13-14-րդ դդ. պատմիչ Ստ. Օրբելեանն ընդհանրակառակը՝ երկրի անունից բխեցնում է բնակիչներինը՝ ջաւախուրների անունը: Տե՛ս Ստեփանոս Օրբելեան, Սիւնիքի պատմութիւնը, Ե., 1986, էջ 303:

6 Կարագեոզեան Ց., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, հ. I, գիրք 1, Եր. 1998, էջ 94, 132, 195, 203-204 եւ Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, հ. Ա., Ուրարտական աղբիւրներ. Ե., 1981, էջ 58, 67:

7 Երեմեան Ս., Ուրարտու պետութիւնը, քարտէզ. Հայ ժողովրդի պատմութիւն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. Ա., Ե. 1971:

8 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1881, գիրք Բ, գլ. Ը, տե՛ս նաեւ Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկայ Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ 1885, էջ 35:

9 Վերջին Ջաւախքը, որն այժմ համընկնում է Ախալքալաքի եւ Նինոծմինդայի վարչական շրջաններին, զբաղեցրել է մօտ 2700 քառ. կմ տարածք, իսկ Ներքին Ջաւախքը՝ ներկայիս Ասպինձայի՝ պատմական Ասպանջակի շրջանը եւ Արտահանի հիւսիսային մասը, կազմել է մօտ 1400 քառ. կմ: Տես Երեմեան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 78:

10 Ծունդան յաճախ նոյնացուել է այժմեան Ախալքալաքի Սուլդա գիւղի հետ: Ոմանք էլ այն տեղադրել են Կուրի ձորում՝ Նաքալաքեւ գիւղի տեղում:

11 Ստրաբոն. Օտար աղբիւրները հայերի մասին, հ. 1, Ե. 1940, էջ 54-57, Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, էջ 196:

12 Քարթլիս ցխովրեբա (Քարթլիի տարեգրութիւնը), հ. 1, Թբիլիսի, 1955, էջ 48-49 (վրացերէն):

13 Նոյն տեղում, էջ 85-86:

14 Պատահական չէ, որ ըստ պատմագիրների, վրաց Միրիան (Միհրան) թագաւորը 320-ական թթ. Հայոց Տրդատ Մեծի օրինակով եւ օժանդակութեամբ է քրիստոնէական դարձի բերել վրաց ժողովրդին:

15 Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ստ. Մալխասեանի, Եր., 1987, էջ 322:

16 Ենթադրւում է, որ Վարձաւունիների անունից է ծագել հետագայի Վարձիա քաղաքի (10-13-րդ դդ.) անունը (ներկայիս Ասպինձայի շրջանում):

17 Ադոնց Ն., Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Ե. 1987, էջ 282, 294, հմմտ. Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 424-425:

18 Ցովհան Մամիկոնեան, Տարօնի պատմութիւն, Ե. 1989, էջ 114. Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, էջ 682:

19 Ցովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 244:

20 Այժմ Ախալքալաքի հարաւում կա Գոգաշէն անունով գիւղ:

21 Սամցխէ կամ Մեսխէթ գաւառը համապատասխանում է ներկայիս Ախալցխայի եւ Ադիգէնի վարչական շրջաններին:

22 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Հ. Բարթիկեանի, Եր., 1991, էջ 158:

23 «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական», Մոսկուա, 1861, էջ 136: Վարդան պատմիչի այդ վկայութիւնից հետեւում է, որ հայերը քաղաքը կոչել են ոչ թէ վրացական ձեւով Ախալքալաք, այլ՝ Նոր քաղաք: Փաստորէն նոյն միտքը կայ նաեւ Ուռհայեցու մօտ, որը գործածում է միայն Ախալ՝ նոր տեղանունը: Զպէտք է մոռանալ, որ Ախալ եւ քաղաք բառակապակցութեան մէջ վերջին բառը միայն վրացերէն չէ. քալաքը նաեւ հայկական քաղաք բառն է:

24 Մարգարեան Հ. Գ., Հիւսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմութեան մի քանի հարցեր, Ե., 1980, էջ 122:

25 Մանր ժամանակագրութիւններ, հ. 2, Ե. 1956, էջ 502, հմմտ. Ստ. Օրբելեան, Ժամանակագրութիւն, Ե. 1942, էջ 18-19:

26 Жизнь царицы Тамары. Памятники грузинской

© National Library of Armenia

литературы, т. V, Тбилиси, 1985, стр. 37, 46. Թամար թագուհու կեանքը, Վրացական պատմական գրականութեան յուշարձանները, հ. 5, Թբիլիսի 1985, էջ 37, 46 (ռուսերէն):

27 Վրաց ժամանակագրութիւն /1207-1318/, թարգմանութիւնը հին վրացերէնից Պ. Մուրադեանի, Ե., 1971, էջ 66, 73:

28 Ե. Լալայեանը 19-րդ դ. վերջին ականատես է եղել այդ ժամանակաշրջանին վերաբերող բազմաթիւ խաչքարերի (Լալայեան Ե., Երկեր, հ. 1, Եր., 1983, էջ 55): Դրանց մի մասն ուսումնասիրուել է Սամուէլ Կարապետեանի կողմից, (Կարապետեան Ս., Ջաւախքի խաչքարերը, Ե. 1995): Ծունդայում, Թմկաբերդում եւ այլուր յայտնաբերուած XIV-XV դարերի հայերէն արձանագրութիւններ ունեցող խաչքարերի մասին աշխատութիւններ ունի նաեւ վրաց պատմաբան Լ. Դաւլիանիձէն (տե՛ս Արտանուջի, ամսագիր, Թբիլիսի, 1998, թիւ 7, էջ 19, 58 (վրացերէն):

29 Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 62:

30 Գուրջիստանի (Վրաստանի) վիլայեթի մեծ հարկացուցակը, գիրք 2, Թբիլիսի, 1941, էջ 191-243, 275-278 (վրացերէն):

31 Վրաստանում Հայաստանի անմիջական օժանդակութեամբ քրիստոնէութեան տարածումից յետոյ վրաց եկեղեցին ընկաւ հայ առաքելական եկեղեցու ազդեցության տակ եւ փաստօրէն կազմեց նրա մի ճիւղը: Սակայն 607-608 թթ. վրաց կաթողիկոս Կիւրիոն Սկուտրիեցին, քաղաքական նկատառումներով հասաւ հայ-վրացական եկեղեցական պառակտմանը եւ նախընտրեց յունադաւանութիւնը: Ջաւախքի հայերը մնացին առաքելական եկեղեցու ենթակայութեան տակ եւ միաւորուեցին գաւառի Ջրէսկ հոգեւոր կենտրոնի /այժմ՝ Ջրէս գիւղ/ շուրջը: Վրաց Բագրատունիների հզօրացման շրջանում վրացական եկեղեցին պարտադրեց Սամցխէի, Ջաւախքի եւ պատմական Տայքի հայերի մի մասին ընդունելու քաղկեդոնականութիւն: 17-րդ դ. հեղինակ Ցակոբ Կարնեցու վկայութեամբ վերջիններս «ազգաւ եւ կրօնիւն վրացի (էին - Ա. Մ.), բայց հայի լեզուաւ խօսէին» (Մանր ժամանակագրութիւններ, հ. Բ, Ե., 1956, էջ 554):

32 Վրաց պատմաբաններն ու ներկայիս քաղաքական գործիչներն այդ տերմինի մէջ էթնիկական իմաստ են դնում՝ փորձելով մեսխեթցիներին ներկայացնել իբր զուտ վրացիների:

33 Քարթլիս Ցխովրեբա (Քարթլիի տարեգրութիւնը), հ. 4, Թբիլիսի, 1973, էջ 669-670 (վրացերէն):

34 Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, Ե., 1973, էջ 67:

35 Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 124-127:

ԿԼՈՐ, ՈՒՂՂԱՆԿԻՒՆ, ԵՌԱՆԿԻՒՆԻ ՅՕՐԻՆՈՒԱԾՔՆԵՐԸ ԵՒ ՔԱՌԱԿՈՂՄ ՈՒ ԵՌԱԲԱԺԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՒՄ

Աշոտ Հայկազուն Գրիգորեան

Ճարտարապետական իւրաքանչիւր յօրինուածք իր կառուցուածքային յենքում ընդգրկում է յատակագծային եւ ծաւալատարածական միասնութիւնը, որով պայմանաւորւում է յօրինուածքի տիպ-տեսակը: Այն փոփոխւում է պատմական ժամանակաշրջանում՝ իր վրա կրելով օրուայ թելադրանք-գործոնների հետքը, միաժամանակ պահպանելով նախաստեղծ շատ տարրեր եւ յօրինուածքներ: Ակնյայտ է նաեւ, որ հայ մշակոյթի ընդհանուր պատմութիւնը առլեցուն է հազարաւոր պատմական, հնագիտական, գրաւոր եւ նիւթեղէն վաւերագրերով, որոնք մէկ աւելորդ անգամ հաստատում են մարդու որպէս բանական էակի մտածողութեան, բնափիլիսոփայութեան, մտաւոր եւ մշակութային գործունէութեան եւ մասնաւորապէս, ճարտարապետութեան փոխպայմանաւորուածութիւնը:

Ճարտարապետական յօրինուածքային հայեցակէտերը (բնակելի եւ թէ պաշտամունքային կառոյցների) կապուած են մարդ-տիեզերք-շրջակայ աշխարհ բնափիլիսոփայական հասկացութիւնների հետ: Մ. Էլիադէն գրում է. «Տիեզերակազմութիւնն ամէն մի կառոյցի եւ շինութեան նախօրինակ մանրակերտն է».[1] Հետեւաբար ճարտարապետական յօրինուածքային նախատիպեր հանդիսացող կլոր եւ ուղղանկիւն (բնակելի տուն-«գլխատուն», եկեղեցի, տաճար եւ այլն) յատակագծային յօրինուածքների[2] ձեւաւորման հիմքում պէտք է փնտրել մարդ-տիեզերք հասկացութիւններից բխող մօտեցումներ: Մարդու մարմնի եւ կենդանաշրջանի համապատասխանութիւնը գալիս է շատ հնուց:[3] Եւ ընդհանրապէս մարդը համարուել է փոքր աշխարհ, իսկ տիեզերքը՝ մեծ (Դեմոկրիտ, Դաւիթ Անյաղթ): Այս միտքն է հաստատում նաեւ Յովհաննէս Երզնկացին. «Երեւելի արարածքս մեծ աշխարհ ասի, եւ մարդ՝ փոքր աշխարհ»[4].

«Մարդ փոքր աշխարհի» բնակատեղին երկիր մոլորակն է: Այստեղ կողմնորոշուելու ամենապարզ եւ բնական ձեւը մարդը գտել է երկիր-բնակատեղիի քառակողմ բաժանումով (դէպի արեւ, արեւածագ, հետագայում՝ արեւելք դիմային կողմնորոշումով): Այդ են վկայում Հայկական լեռնաշխարհում սփռուած ժայռապատկերների (օրինակ՝ Գեղամայ, Սիւնաց լեռներ, Արագած եւ այլն) կլոր, քառակուսի եւ կլորի մէջ ներգծուած քառակուսի, կամ խաչ (քառաթեւ), կամ կլորի մէջ ներգծուած խաչը պատկերող խումբը, որտեղ ամփոփուած են արեւ-տիեզերք, երկիր, երկիր-աշխարհի չորս կողմեր (հետագայում արեւելք-արեւմուտք, հիւսիս-հարաւ), չորս կէտ (համաստեղութիւն), չորս մարդ (օրինակ՝ այն պատկերը, որտեղ երկիր մոլորակը պատկերուած է կլոր օղակով, որի մէջ ներգծուած է քառաթեւ հաւասարակողմ խաչը, ըստ շրջանագծի երկու փոխուղղահայեաց տրամագծերի եւ ամէն մի խաչաթեւերի եւ շրջանագծի հատման կէտում «կանգնած» չորս մարդու պատկերներ հիերոգլիֆներ[5]) (տե՛ս պատկեր 1):

© National Library of Armenia